ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

МАТЕРИАЛЫ ЕЖЕГОДНОЙ НАУЧНОЙ СЕССИИ 2015 ГОДА

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

PROCEEDINGS OF THE ANNUAL SCIENTIFIC SESSION OF 2015

1.4 (14)

Общественные науки (Юриспруденция и политология)

Social Sciences (Jurisprudence and Political Science)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2016

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2015 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ

1.4 (14)

Հասարակական գիտություններ
(Իրավագիտություն և քաղաքագիտություն)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издается по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս Գ. Ղազինյան
ի.գ.դ., պրոֆ. Ս. Դիլբանդյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեռյան
պ.գ.թ., դոց. Մ. Վարդազարյան
ի.գ.թ. Ա. Թավադյան

Редакционная коллегия:

д.ю.н., проф., академик
НАН РА Г. Казинян
д.ю.н., проф. С. Дилбандян
д.п.н., проф. Г. Керян
к.и.н., доц. М. Вардазарян
к.ю.н. А. Тавадян

Editorial Board

DSc, Prof., Academician of
NAS RA G. Ghazinyan
DSc, Prof. S. Dilbandyan
DSc, Prof. G. Keryan
PhD, Associate Prof. M. Vardazaryan
PhD A. Tavadyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,
Էլ. փոստ՝ sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.ysu.am.

Ժողովածուն հրատարակվում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Գրիգոր Բալասանյան
ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն, դոցենտ, պ.գ.թ.
Էլ. փոստ՝ g.balasanyan@ysu.am

ԱՄՆ-Ը, ԵՄ-Ն ԵՎ ՌԴ-Ն ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԽՍՀՄ փլուզումից հետո մեծ տերության տարբեր անկյուններում ծագեցին հակամարտություններ, որոնք հիմնականում էթնիկ բնույթ ունեին: Հարավային Կովկասը ևս բացառություն չէր: Պատմականորեն այնտեղ գոյություն ունեցող հակամարտությունները, խորհրդային Միության ղեկավարների կարծիքով, կարգավորվեցին այդ պետության ստեղծմամբ: Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո այդ հակամարտությունները կրկին բորբոքվեցին, քանի որ խնդրի արմատական կարգավորում չէր եղել: Սույն հոդվածում նպատակահարմար ենք համարում ուսումնասիրել ԱՄՆ-ի, ՌԴ-ի և ԵՄ-ի ներգրավվածությունը Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորման գործում, քանի որ հենց այս երեք ուժային կենտրոններն են տարածաշրջանում ակտիվ քաղաքականություն վարում:

Հարավային Կովկասում ձևավորվել են երեք էթնոքաղաքական հակամարտություններ, որոնցից երկուսը գտնվում են Վրաստանի տարածքում, մեկը՝ Ադրբեջանի: Այս հակամարտությունների ընդհանրությունն այն է, որ Լեռնային Ղարաբաղի հայերը, Վրաստանի կազմում բնակվող աբխազներն ու օսերը, ունենալով տարածքային ինքնավար միավորներ, որոշեցին ինքնորոշվել և ձեռք բերել անկախություն: Տարբերությունն այն էր, որ Լեռնային Ղարաբաղի հայերը ձգտում էին միավորվել մայր հայրենիքին՝ Հայաստանին, իսկ աբխազների և օսերի նպատակն էր ստեղծել անկախ պետություններ: Ի տարբերություն այլ հետխորհրդային հակամարտությունների, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար մարեցին, Հարավային Կովկասի հակամարտությունները չէին մարել, այլ ուղղակի նրանց ակտիվությունն էր նվազել:

Պետք է նշել, որ և՛ Լեռնային Ղարաբաղի, և՛ վրաց-աբխազական, և՛ վրաց-հարավօսական հակամարտություններն իրենց բնույթով միջէթնիկ են, սակայն ունեն որոշակի տարբերություններ.

1. Վրաստանում մշտադիտարկմանը մասնակցում էին ՄԱԿ-ի մի քանի կառույցներ՝ փախստականների և մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գլխավոր հանձնակատարների վարչությունները[1]: Ի հակադրումն՝ Լեռնային Ղարաբաղում ՄԱԿ-ը ներկայացուցիչներ չուներ:

2. Վրաստանի դեպքում հակամարտության գոտում ԱՊՀ խաղաղապահ ուժերի մանդատի ներքո տեղակայվեցին ռուսական զորքեր, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում նման ուժերն չկան և կողմերին հիմնականում հաջողվում է պահպանել հրադադարի ռեժիմը:

Ուսումնասիրության սկզբում ցանկանում ենք ներկայացնել, թե ինչպիսի քաղաքականություն էին իրականացնում ԱՄՆ-ն և ՌԴ-ն Վրաստանում տեղի ունեցած հակամարտությունների նկատմամբ*: Հակամարտության առաջին իսկ օրերից ՌԴ-ն ձգտում էր նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել և հանդես եկավ որպես միջնորդ հակամարտող կողմերի միջև:

1992 թ. սեպտեմբերի 3-ին Մոսկվայում Վրաստանի և Աբխազիայի միջև ստորագրվեց զինադադարի վերաբերյալ առաջին համաձայնագիրը[2], որը, սակայն, շատ շուտ խախտվեց և ռազմական գործողությունները վերսկսվեցին նոր թափով: Մեկ տարի անց ՌԴ-ն ևս մեկ փորձ կատարեց հակամարտող կողմերի միջև զինադադար ստորագրելու համար: 1993 թ. հուլիսի 27-ին Սոչիում Վրաստանի և Աբխազիայի միջև ստորագրվեց զինադադարի վերաբերյալ երկրորդ համաձայնագիրը[3]: Այս համաձայնագրի կատարումը վերահսկելու համար 1993 թ. ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդն ընդունեց 858 բանաձևը, որի հիման վրա ձևավորվեց Վրաստանում մշտադիտարկման ՄԱԿ-ի առաքելությունը[4]:

---

[1] **Колобов О., Коротышев А., Минаев Н.,** Участие Организации Объединенных Наций в постсоветском урегулировании в Абхазии и Южной Осетии: оценки эффективности, Вестник Нижегородского университета им. Н. И. Лобочевского, №5 (1)/2011.

* ԵՄ-ն շատ ավելի ուշ միայն միացավ այս գործընթացին:

[2] "Конфликт между Грузией и Абхазией. История вопроса", РИА новости, 29.12.2006 հասանելի է՝ http://ria.ru/spravka/20061229/58076287.html.

[3] "Грузино-абхазский конфликт: краткая история", РИА новости, 01.07.2008, հասանելի է՝ http://ria.ru/spravka/20080701/112698696.html.

[4] **Колобов О., Коротышев А., Минаев Н..**

Վրաց-հարավօսական հակամարտության կարգավորման գործում ՌԴ-ն ևս շատ ակտիվ էր: 1992 թ. հունիսի 24-ին Դոգոմիսում Հարավային Օսիայի և Վրաստանի միջև ստորագրվեց հակամարտության կարգավորման սկզբունքների մասին համաձայնագիր և Վրաստանի և Հարավային Օսիայի միջև անցկացվեց բաժանարար գիծ[1]:

Պետք է նշել, որ մինչև 1990-ական թթ. առաջին կեսը ԱՄՆ-ը, Վրաստանի անկախությունը ճանաչելով հանդերձ, գրեթե չէր միջամտում այս հակամարտությանը: Ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով՝ Հարավային Կովկասը ԱՄՆ-ին հետաքրքրում էր միայն տնտեսական ասպեկտով, իսկ արտաքին քաղաքական հարցերով ԱՄՆ-ը գործում էր ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակից Թուրքիայի միջոցով:

1990-ական թթ. երկրորդ կեսին Միացյալ Նահանգները սկսեց ակտիվանալ տարածաշրջանում: Բիլ Քլինթոնի վարչակարգը սկսեց աջակցել տնտեսական ծրագրերին, որոնցից կարելի է առանձնացնել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը: 1997 թ. փետրվարին ամերիկյան վարչակազմը հայտարարեց, որ Հարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի երկրները կենսական նշանակություն ունեն ԱՄՆ-ի համար: Միաժամանակ ամերիկյան վարչակազմում հիմնվեց Կասպյան տարածաշրջանի հարցերով հատուկ խորհրդականի պաշտոնը[2]:

Պաշտոնական Վաշինգտոնի Կասպյան ռազմավարության մշակմանը ներգրավված են նախագահի աշխատակազմի, Կոնգրեսի և և այլ գերատեսչությունների հարյուրավոր աշխատակիցներ: Նրանց մասնակցությամբ անցկացվում են բազմապիսի կոնֆերանսներ, սեմինարներ, որոնց հիմնական նպատակն էր՝ գտնել նոր, ավելի արդյունավետ ուղիներ տարածաշրջանում այդ քաղաքականության իրականացման համար: Պետք է նշել, որ նման քաղաքականության իրականացման գործում մեծ դեր ունեն ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերը[3]:

Նախագահ Ջորջ Բուշ կրտսերի նախագահության օրոք տարածաշրջանում ԱՄՆ-ի վարած քաղաքականության մեջ ռազմական բաղադրիչը սկսեց գերազանցել դիվանագիտությանը և տնտեսությանը: Ադրբեջանը և Վրաստանը, ձգտելով ԱՄՆ-ի միջոցով հօգուտ իրենց կարգավորել Հարավային Կովկասի էթնոքաղաքական հակամարտությունները, ավելի ջերմ հարաբերություններ հաստատեցին պաշտոնական Վաշինգտոնի հետ:

Ժամանակը ցույց տվեց, որ Վրաստանի հետ կապված՝ ԱՄՆ-ն ուներ բավականին հեռուն գնացող պլաններ: Օգտագործելով 2003 թ. ժողովրդական լայն մասսաների դժգոհությունը խորհրդարանական ընտրությունների արդյունքներից՝ վրացական ընդդիմությունը, ամերիկյան կողմի ակտիվ աջակցությամբ, երկրում իրականացրեց պետական հեղաշրջում, որը պատմության մեջ մտավ «Վարդերի հեղափոխություն» անվամբ: Ընդդիմությունը հակառուսական հռետորաբանությամբ եկավ իշխանության՝ խոստանալով վերադարձնել Աբխազիան և Հարավային Օսիան:

2005 թ. մայիսի 9-ին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ կրտսերը պաշտոնական այցով ժամանեց Վրաստան: Այս քայլով Միացյալ Նահանգները ցանկացավ ցույց տալ, որ պաշտոնական Վաշինգտոնի համար Հարավային Կովկասում գլխավոր գործընկեր է համարվում Վրաստանը: Մեր կարծիքով՝ Վրաստանում ԱՄՆ-ի գլխավոր սխալն այն էր, որ նա փորձեց կարգավորել այնտեղ առկա հակամարտությունները միայնակ՝ առանց Ռուսաստանի մասնակցության: Վրաստանի ղեկավարությանը մի պահ թվաց, որ ԱՄՆ-ի աջակցությունը և երկրում առկա մեծ քանակությամբ զենքը բավարար են հակամարտությունները ռազմական ճանապարհով կարգավորելու համար: Կարծում ենք, որ Միխեյիլ Սաակաշվիլու՝ օվկիանոսից այն կողմ գտնվող որոշ խորհրդականներ վստահեցրել էին նրան, որ պատերազմի վերսկսման դեպքում Ռուսաստանը չի միջամտի և կբավարարվի միայն դատապարտող հայտարարություններով: Արդյունքը տեսանելի է բոլորիս համար: Կարճատև պատերազմից հետո ՌԴ-ն պաշտոնապես ճանաչեց Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախությունը: Ճանաչման հայտարարության մեջ ասվում էր, որ այդ քայլը հնարավորություն կտա ապահովելու աբխազ և օս ժողովուրդների անվտանգությունը, ինչպես նաև կնպաստի տարածաշրջանի զարգացմանը[4]:

Այս իրադարձությունների ժամանակ ՌԴ-ն անսպասելիորեն ցույց տվեց, որ մտադիր չէ հեռանալ տարածաշրջանից: Այդ մասին ՌԴ նախագահ Վ. Պուտինն ուղղակի հայտարարեց 2013 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստան կատարած պետական այցի ժամանակ[5]:

Արևմուտքը շտապեց քննադատել Ռուսաստանին Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունները ճանաչելու համար և նրան մեղադրեց Վրաստանի տարածքային ամբողջականությունը

---

[1] Соглашение о принципах урегулирования Грузинско-Осетинского конфликта (Дагомысское соглашение от 24.06.1992), 21/09/2005, հասանելի է՝ http://www.apsny.ge/notes/1127333974.php.

[2] Տե՛ս **Гаджиев К.,** Большая игра на Кавказе, вчера, сегодня, завтра, Москва, 2012, с. 169.

[3] Տե՛ս նույն տեղում, էջ170:

[4] Внешнеполитическая и дипломатическая деятельность Российской Федерации в 2008 году, Обзор МИД России, Москва, 2009.

[5] "Государственный визит Президента России Владимира Путина в Республику Армения", Пресс-конференция по итогам российско-армянских переговоров, 2 декабря 2013 года, Ереван, հասանելի է՝ http://www.cis.minsk.by/news.php?id=2377.

խախտելու մեջ: Սրան ի պատասխան՝ ռուսական կողմը նշեց, որ զարմանալի կերպով Կոսովոյի դեպքում ընդունվեց ազգերի ինքնորոշման սկզբունքը, իսկ այս դեպքում գերիշխող է համարվում Վրաստանի տարածքային ամբողջականության սկզբունքը:

Նշենք, որ ժամանակին Վ. Պուտինն զգուշացրել էր Արևմուտքին չճանաչել Կոսովոն, քանի որ այն անցանկալի հետևանքներ կունենար ամբողջ աշխարհում: 2008 թ. փետրվարի 23-ին՝ ԱՊՀ ղեկավարների ոչ պաշտոնական գագաթնաժողովի ժամանակ, Պուտինը հայտարարեց. *«Կոսովոյի նախադեպը ահավոր է: Այն, ըստ էության, կոտրում է միջազգային հարաբերությունների՝ ոչ թե տասնամյակներով, այլ նույնիսկ հարյուրամյակներով ձևավորված համակարգը: Եվ այն կարող է իր հետևից բերել անկանխատեսելի հետևանքների մի ողջ շղթա»*[1]:

Ռուսաստանի Դաշնության կովկասյան քաղաքականության հակառակորդները նրան մեղադրեցին այն հարցում, որ առաջին անգամ ՌԴ կողմից ռազմական ուժ կիրառվեց ԱՊՀ անդամ պետության նկատմամբ, իսկ ՌԴ կողմնակիցները նշում էին, որ առաջին անգամ Ռուսաստանը ոչ թե խոսքով, այլ գործով ապացուցեց, որ կարող է պաշտպանել իր ազգային շահերը և դրանից հետո շատերը սկսեցին հաշվի նստել նրա հետ[2]:

1990-ական թթ. ԱՄՆ-ն ակտիվ չէր նաև ԼՂ հակամարտության կարգավորման գործում: Նույնիսկ զինադադարի վերաբերյալ Բիշքեքյան արձանագրություններն ստորագրվեցին հենց Ռուսաստանի ակտիվ միջնորդությամբ: ԱՄՆ-ը ողջունեց դրանք և բավարարվեց այդքանով: Կարծում ենք՝ այստեղ մեծ նշանակություն ուներ այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը ցանկանում էր հավասարակշռված քաղաքականություն վարել Ադրբեջանի ու Հայաստանի նկատմամբ: 1992-2005 թթ. ԱՄՆ-ն Ադրբեջանին հատկացրեց 500 մլն դոլար և ԱՄՆ պաշտպանության նախարարության պահեստներից տրամադրեց նաև 115 մլն դոլարի ոչ ռազմական կիրառության համար նախատեսված ապրանքներ: Նույն ժամանակահատվածում Հայաստանին է տրամադրվել 1,3 մլրդ դոլար և 218 մլն դոլարի ոչ ռազմական կիրառության համար նախատեսված ապրանքներ*:

Հեյդար Ալիևի իշխանության գալուց հետո ԱՄՆ-ի և Ադրբեջանի միջև տնտեսական հարաբերություններն զգալիորեն ակտիվացան և 1994 թ. սեպտեմբերի 20-ին երկու երկրների միջև ստորագրվեց նավթային պայմանագիր, որը տեսաբանները կնքեցին «Դարի պայմանագիր» անունով[3]:

1990-ական թթ. երկրորդ կեսից ԱՄՆ-ի կողմից որոշակի ակտիվություն նկատվեց, և 1997 թ. ստեղծվեց ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի մեջ մտան ԱՄՆ-ը, Ֆրանսիան և ՌԴ-ն: Ռուսաստանը ստիպված էր համաձայնվել նմանօրինակ ձևաչափի հետ, քանի որ միայնակ ի վիճակի չէր կարգավորել ԼՂ հակամարտությունը:

2001 թ. սեպտեմբերի 11-ի հայտնի իրադարձություններից հետո ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ սկսեց ավելանալ ռազմական բաղադրիչը: Միացյալ Նահանգները հատկապես ակտիվացավ այն ժամանակ, երբ ընդունվեց այսպես կոչված «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագիրը, որի մեջ ընդգրկվեց նաև Հարավային Կովկասը: Այս հանգամանքը չէր կարող չանհանգստացնել ՌԴ-ին:

2006 թ. դեկտեմբերի 20-ին ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հանդիպեց լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ և ամփոփեց ՌԴ 2006 թ. արտաքին քաղաքականությունը: Անդրադառնալով ԼՂ հակամարտության կարգավորմանը՝ Լավրովը նշեց, որ այս հարցում կանխատեսումներ անելու կարիք չկա: Նրա խոսքերով ՌԴ-ն՝ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ միասին, համանախագահող պետություններ են և նրանց գլխավոր խնդիրն է ապահովել անմիջական շփումը հակամարտ կողմերի միջև[4]: Սրանով ՌԴ-ն ցանկանում էր հասկացնել ԱՄՆ-ին, որ չի ողջունում միակողմանի միջամտությունը հակամարտության կարգավորմանը:

2007 թ. նոյեմբերին Մադրիդում ԵԱՀԿ արտգործնախարարների հանդիպման ժամանակ Մինսկի խմբի կողմից ներկայացվեց հակամարտության կարգավորման վերաբերյալ մի փաստաթուղթ՝ այսպես կոչված, «Մադրիդյան սկզբունքներ», որը պետք է դրվեր բանակցությունների սեղանին: Նոյեմբերի 29-ին այդ փաստաթուղթը փոխանցվեց Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարներին:

---

[1] Путин назвал провозглашение независимости Косово "страшным прецедентом", 23.02.2008, հասանելի է՝ http://lenta.ru/news/2008/02/23/putin.

[2] Տե՛ս **Барановски В.,** Система международных отношений: форморование новых реалий: Глобальная перестройка, под ред. А.А. Дынкина, Н.И. Ивановой, Москва, 2014, с. 304.

* Կարծում ենք՝ թվերի միջև տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ջորջ Բուշ ավագի վարչակազմը 1992 թ. ամռանը ընդունեց «Ազատության աջակցման ակտի» 907-րդ ուղղումը, որով արգելվում էր օգնություն տրամադրել Ադրբեջանին, մինչև վերջինս չվերացներ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի շրջափակումը: Այս որոշման ընդունման գործում մեծ էր նաև ազդեցիկ հայկական լոբբիի դերը: Պետք է նշել, որ հետագայում այս որոշման մեջ անընդհատ ուղղումներ են մտցվել և այժմ այն գրեթե կորցրել է իր նշանակությունը:

[3] **Халилов Дж.,** Помощь США не может оказываться правительству Азербайджана …, 29.10.2012, հասանելի է՝ http://www.gumilev-center.az/pomoshh-ssha-ne-mozhet-okazyvatsya-pravitelstvu-azerbajdzhana/.

[4] Стенограмма выступления Министра иностранных дел России С.В. Лаврова на пресс-конференции по итогам деятельности российской дипломатии в 2006 году, հասանելի է՝ http://civilg8.ru/6900.php.

Մադրիդյան հանդիպումից հետո ՌԴ-ն քայլեր ձեռնարկեց բանակցային գործընթացում նախաձեռնությունը վերցնելու ուղղությամբ: 2008 թ. հոկտեմբերի 2-ին մերձմոսկովյան Մայնդորֆ դղյակում ռուսական կողմի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ՌԴ-ի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը, որի արդյունքում ստորագրվեց Մայնդորֆյան հռչակագիրը: Այս փաստաթուղթը բիշքեթքյան արձանագրություններից հետո ստորագրված առաջին փաստաթուղթն էր, որով կողմերը համաձայնում էին հակամարտությունը կարգավորել բացարձակապես քաղաքական ճանապարհով[1]: Սակայն Ռուսաստանի ջանքերն ի չիք դարձան, քանի որ Ադրբեջանի մեղքով իրավիճակը շփման գծում կտրուկ լարվեց: Որոշ փորձագետներ գտնում են, որ այս սադրանքը չէր կարող իրականացվել առանց Արևմուտքի գիտության. սրանով Արևմուտքը ցանկանում էր Ռուսաստանին ցույց տալ, որ վերջինս ի վիճակի չէ միայնակ կարգավորել հակամարտությունը:

2008 թ. նախագահական ընտրություններից հետո ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ որոշակի փոփոխություններ մտցվեցին: Դա հատկապես դրսևորվեց ԱՊՀ երկրներում քաղաքական գործընթացների նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշմամբ: Այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ հետխորհրդային տարածքում քաղաքական գործընթացների նկատմամբ որոշիչ դերը ԱՄՆ-ը հանձնել էր Ռուսաստանին: Այս մտորումներն ավելի ամրապնդվեցին, երբ 2009 թ. նոյեմբերի 9-ին ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի և ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հանդիպումից հետո հայտարարվեց երկկողմ հարաբերություններում «վերբեռնման» մասին[2]:

2009 թ. սկսած վրացական խնդրի հետ կապված ԱՄՆ-ը սկսեց աստիճանաբար թուլացնել լարվածությունը ՌԴ-ի հետ հարաբերություններում՝ գիտակցելով, որ ՌԴ-ի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչումից հետո Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը հնարավոր չէ մոտ ապագայում: Ըստ էության, օվկիանոսից այն կողմ գերագնահատել էին Վրաստանի նշանակությունը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գերակայություններում: 2010 թ. հուլիսին՝ Թբիլիսի կատարած այցի ժամանակ, Հիլարի Քլինթոնը հայտարարեց, որ Վրաստանին աջակցելու համար ԱՄՆ-ը երկու պատճառ ուներ: Առաջին պատճառն այն էր, որ «Վարդերի հեղափոխության» գաղափարները հիմանականում համապատասխանում էին, այսպես կոչված, «ամերիկյան իդեալներին»: Երկրորդ պատճառն այն էր, որ ԱՄՆ-ի օգնությամբ Վրաստանում զարգացան ժողովրդավարական ինստիտուտները, ինչն էլ իր հերթին նպաստեց նաև երկրի տնտեսության զարգացմանը[3]:

2009 թ. հուլիսին իտալական Աքվիլա քաղաքում Մեծ ութնյակի գագաթնաժողովի ժամանակ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարներ Սարկոզին, Օբաման և Մեդվեդևը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին կոչ արեցին ԼՂ հակամարտությունը կարգավորել խաղաղ ճանապարհով: Նույն թվականի դեկտեմբերի 1-ից 2-ը՝ Աթենքում ԵԱՀԿ անդամ երկրների արտգործնախարարների հանդիպման ժամանակ, ընդունվեց ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ համատեղ հայտարարություն, որտեղ ընդգծվեց ազգերի ինքնորոշման և ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքների կարևորությունը:

2011 թ. հունիսի 24-ին Կազանում տեղի ունեցավ ԵԱՀԿ համանախագահ երկրների գագաթնաժողովը: Հանդիպմանը ներկա էին նաև Հայաստանի և Ադրբեջանի նախագահները: Օրակարգում կար փաստաթուղթ, որը նախօրոք համաձայնեցված էր նաև համանախագահների հետ[4]: Սակայն Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշման պատճառով առաջընթացի հասնել չհաջողվեց:

Չնայած այն հանգամանքին, որ Միացյալ Նահանգները մեծ կարևորություն է տալիս ՌԴ-ի հետ հարաբերություններին, այն չի կարող թույլ տալ վերջինիս ազդեցության ավելացմանը հետխորհրդային տարածքում: Այդ մասին APA գործակալությանը տված հարցազրույցում հայտնեց ՆԱՏՕ-ում ԱՄՆ նախկին դեսպան, պետքարտուղարի օգնականի նախկին տեղակալ Քուրտ Ուոքերը: Նրա կարծիքով՝ ԱՄՆ-ը և ՌԴ-ն պետք է համագործակցության եզրեր փնտրեն Հարավային Կովկասում. *«Ռուսաստանը կարծում է, թե իրավունք ունի վերահսկել կովկասյան տարածաշրջանը: Միացյալ Նահանգները հարգում է կովկասյան ժողովուրդների և պետությունների իրավունքները և համաձայն չէ ռուսական հավակնությունների հետ»*[5]:

Առանձին ցանկանում ենք ներկայացնել, թե ինչպիսի դիվանագիտական գործունեություն ծավալեց ԵՄ-ն 2008 թ. օգոստոսյան իրադարձությունների ժամանակ: Հենց սկզբից ԵՄ-ն բավականին ակ-

---

[1] "Встреча глав РФ, Армении и Азербайджана началась в замке Майндорф", РИА новости, 02.11.2008, հասանելի է՝ http://ria.ru/politics/20081102/154308118.html.

[2] "Главы внешнеполитических ведомств России и США обещали друг другу много тяжелой работы", Российская Газета, 11.03.2009, հասանելի է՝ http://www.rg.ru/2009/03/11/knopka.html.

[3] Տե՛ս Современные международные отношения, под ред. А.В. Торкунова, Москва, 2014, с. 143.

[4] "Саммит глав РФ, Азербайджана и Армении, который прошел сегодня в Казани, завершился без достижения договоренностей", 24.06.2011, հասանելի է՝ http://www.rbc.ru/rbcfreenews/20110624212217.shtml.

[5] "США не согласны с претензиями России на «сферу влияния» на Кавказе – Волкер, 10.09.2011, հասանելի է՝ http://news.am/rus/news/73754.html.

տիվ էր, իսկ երկրներից իր ակտիվությամբ աչքի էր ընկնում հատկապես Ֆրանսիան: Սա ուներ մի քանի պատճառ: Նախ, Ֆրանսիան այդ պահին ԵՄ նախագահող երկիր էր: Իսկ մյուս պատճառն այն էր, որ սրանով Սարկոզին ցանկանում էր ցույց տալ ողջ աշխարհին, որ Ֆրանսիան ի վիճակի է կանգնեցնել ռազմական գործողությունները: Ֆրանսիայից բացի, որոշակի ակտիվություն էին ցուցաբերում նաև Գերմանիան և Իտալիան:

Օգոստոսի 8-ի երեկոյան գերմանական կողմի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հեռախոսազրույց ՌԴ նախագահ Մեդվեդևի և Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի միջև: Խոսակցության ժամանակ Մեդվեդևը վրացական բանակի գործողությունները ագրեսիա որակեց և հայտարարեց, որ ՌԴ-ն ամեն ջանք կգործադրի Հարավային Օսիայի ազգաբնակչության անվտանգությունը ապահովելու համար, հատկապես, որ նրանց մեծամասնությունը ՌԴ քաղաքացիներ էին: Մերկելը ևս մտահոգություն հայտնեց ստեղծված դրության համար և նշեց, որ գերմանական կողմը պատրաստ է ջանքեր գործադրել խնդրի խաղաղ կարգավորման համար[1]: Երկու օր անց տեղի ունեցավ Մեդվեդևի և Նիկոլա Սարկոզիի հեռախոսազրույցը: Պաշտոնական հաղորդագրության մեջ նշված էր հետևյալը. *«Նիկոլա Սարկոզին, որպես ԵՄ նախագահող երկրի ղեկավար, ընդգծեց, որ եվրոպացիների խնդիրն է նպաստել կրակի դադարեցմանը, և տարածաշրջանում իրավիճակի բարելավմանը: Մեդվեդևը իր հերթին ընդգծեց, որ այդ խնդիրների կարգավորման համար անհրաժեշտ է անհապաղ դուրս բերել վրացական զինված ուժերը Հարավային Օսիայից, ինչպես նաև հասնել նրան, որ Վրաստանի և Հարավային Օսիայի միջև ստորագրվի իրավական պարտավորվածություն նախատեսող պայմանագիր ուժի կիրառումից հրաժարվելու մասին: Բացի այդ այս ամենը վրացական կողմը պետք է կատարի առանց նախապայմանների»*[2]:

Նշենք, որ ի տարբերություն այլ պետությունների ղեկավարների, Սարկոզին ավելի ակտիվ գործունեություն ծավալեց: Երկու օր անց՝ օգոստոսի 12-ին, Կրեմլում Սարկոզին հանդիպում ունեցավ Դմիտրի Մեդվեդևի հետ և բանակցությունների արդյունքում ընդունվեց համատեղ փաստաթուղթ, որը հայտնի է նաև «Մեդվեդև-Սարկոզիի պլան» անունով: Այն բաղկացած էր 6 կետից, որոնցից առաջինն այն էր, որ վրացական զորքերը պետք է վերադառնային զորամասեր: Ռուսական զորքերը պետք է հետ քաշվեին մինչև այն դիրքերը, որը զբաղեցնում էին մինչև պատերազմական գործողությունները: Պետք է միջազգային քննարկման առարկա դառնային Աբխազիայի և Հարավային Օսիայի հետագա կարգավիճակին վերաբերվող հարցերը, ինչպես նաև անվտանգության ապահովման ուղիները[3]:

Նույն օրը Սարկոզին մեկնեց Թբիլիսի, և երկարատև բանակցություններից հետո Միխեյիլ Սաակաշվիլին համաձայնվեց ստորագրել «Մեդվեդև-Սարկոզիի պլան»-ը:

2008 թ. օգոստոսյան իրադարձություններն իր գրքում մանրամասն ներկայացրել է Բիլ Քլինթոնի վարչակազմի պետքարտուղարի նախկին օգնական Ռոնալդ Ասմուսը: Գիրքը կոչվում է “A little War that Shook the World: Georgia, Russia and the Future of the West” («Փոքր պատերազմ, որ ցնցեց աշխարհը. Վրաստանը, Ռուսաստանը և Արևմուտքի ապագան»): Ամերիկացի դիվանագետի խոսքերով՝ օգոստոսի 12-ի երեկոյան Վրաստանի հարյուր հազարավոր քաղաքացիներ հավաքվել էին վրացական պառլամենտի մոտ և վանկարկում էին Ֆրանսիայի նախագահի անունը: Այդ պայմաններում Սարկոզին կարգավորման պլանը հանձնեց Սաակաշվիլուն՝ պնդելով, որ ավելի լավ բան նա չի ստանա[4]:

Մեր ուսումնասիրության վերջին հատվածում մենք ցանկանում ենք ներկայացնել արդի փուլում ԱՄՆ և ՌԴ դիրքորոշումները հարավկովկասյան հակամարտությունների նկատմամբ: Ըստ էության, ՌԴ-ի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունների ճանաչումը սրանց նկատմամբ հետաքրքրությունը, կարծեք, մղվել է երկրորդ պլան: Վրաստանի իշխանությունները լիովին գիտակցում են, որ գոնե մոտ ապագայում իրենց չի հաջողվի այսպես ասած «ետ բերել» կորցրած տարածքները: Կարծում ենք՝ սա լավ հասկանում են նաև օվկիանոսից այն կողմ, քանզի ԱՄՆ հետաքրքրությունն այս հակամարտությունների նկատմամբ մի տեսակ սառել է, ինչը չի կարելի ասել ԼՂ հակամարտության նկատմամբ:

2014 թ. մայիսի 7-ին Մինսկի խմբում ԱՄՆ համանախագահ Ջեյմս Ուորլիքը ԼՂ հակամարտության կարգավորմանն ուղղված 6 կետից բաղկացած փաստաթուղթ առաջարկեց, որում ասվում էր այն, ինչ առաջարկվում էր 1994 թ. սկսած՝ միջանկյալ կարգավիճակ ԼՂ-ի համար, Լաչինի միջանցքի ստեղծում, 7 շրջանների վերադարձ Ադրբեջանին և այլն: Միևնույն ժամանակ Ուորլիքը պարզաբանեց, որ սա ԱՄՆ-ի առաջարկն է և արվում է մյուս համանախագահներից առանձին: Այս քայլը, մեր կարծի-

---

[1] “Состоялся телефонный разговор Дмитрия Медведева с Федеральным канцлером ФРГ Ангелой Меркель”, հասանելի է՝ http://archive.kremlin.ru/events/chron/2008/08/205061.shtml.

[2] “Состоялся телефонный разговор Дмитрия Медведева с Президентом Франции Николя Саркози”, հասանելի է՝ http://archive.kremlin.ru/events/chron/2008/08/205061.shtml.

[3] “Саркози доволен, что Россия выполнила договоренности по отводу войск”, 23.08.2008, հասանելի է՝ http://ria.ru/world/20080823/150623160.html#ixzz3I5c96kzh/.

[4] “Грузию спас Саркози”, հասանելի է՝ http://forum.nvrsk.ru/index.php?showtopic=158661.

քով, շատ վտանգավոր է, քանզի ցույց է տալիս, որ կան որոշ հակասություններ համանախագահների միջև, ինչն էլ իր հերթին չի կարող նպաստել հակամարտության կարգավորմանը: Մի քանի օր անց զինադադարի ստորագրման 20-ամյակի կապակցությամբ հայտարարությամբ հանդես եկան համանախագահները, որոնք ևս մեկ անգամ ընդգծեցին իրենց միասնական դիրքորոշումը հակամարտությանը խաղաղ ճանապարհով կարգավորելու վերաբերյալ[1]:

Այս հայտարարությունների միջև էական տարբերությունն այն է, որ Ուորլիքը չի նշում, թե հակամարտության կարգավորման համար միջազգային իրավունքի որ սկզբունքը պետք է կիրառվի, իսկ համանախագահների հայտարարության մեջ նշվում է, որ տարածքային ամբողջականության, ազգերի ինքնորոշման և ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքները պետք է լինեն կարգավորման հիմքում:

2014 թ. օգոստոսի սկզբներին ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում և հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը խիստ լարվեց և նույնիսկ կողմերը սկսեցին բացեիբաց խոսել պատերազմի վերսկսման մասին: Կովկասում պատերազմի վերսկսումը ձեռնտու չէր ո՛չ ՌԴ-ին, ո՛չ ԵՄ-ին և ո՛չ էլ ԱՄՆ-ին: Համանախագահ երկրները սկսեցին մտածել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպում կազմակերպելու մասին, որպեսզի թուլացնեն լարվածությունը: Սկզբում ծրագրվում էր այն անցկացնել Փարիզում, սակայն հետո որոշվեց կազմակերպել ՌԴ-ի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպում: Հանդիպումը կայացավ 2014 թ. օգոստոսի 10-ին Վլադիմիր Պուտինի՝ Սոչի քաղաքում գտնվող նստավայրում[2]: Այս հանդիպման արդյունքում լարվածությունը սահմանին թուլացավ, և կրակը դադարեցվեց: Սա կարելի է համարել ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նկատմամբ ՌԴ-ի դիվանագիտական հաղթանակ: Սրանով վերջինս ցույց տվեց, որ հնարավորություն ունի ազդել հակամարտող կողմերի վրա: ՌԴ-ին ձեռնտու չէր, որ իր արևմտյան սահմաններին զուգահեռ ռազմական գործողություններ սկսվեին նաև հարավային սահմանների մոտ:

Ի տարբերություն Ռուսաստանի՝ ԱՄՆ-ը ԼՂ հակամարտության նկատմամբ ավելի ճկուն դիրքորոշում ունի: Ամեն տարի ԱՄՆ կոնգրեսի որոշմամբ առանձին կետով ԼՂ-ին հատկացվում է ֆինանսական օգնություն: Բացի այդ, ի տարբերություն ՌԴ պետդումայի պատգամավորների՝ ԱՄՆ կոնգրեսմենները բազմիցս եղել են Արցախում: Վերջին շրջանում ԱՄՆ-ը Հարավային Կովկասում իր դիրքերը որոշակիորեն զիջել է ԵՄ-ին՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով այլ տարածաշրջանների:

Պետք է նշել, որ Հարավային Կովկասում ՌԴ քաղաքականությունը միանշանակ չի ընդունվում տարածաշրջանի պետությունների կողմից: Մի կողմից՝ Ռուսաստանը հայտարարում է, որ Հայաստանն իր ռազմավարական դաշնակիցն է, սակայն մյուս կողմից՝ զենք է վաճառում մի երկրի, որը պատերազմական դրության մեջ է գտնվում ՀԱՊԿ անդամ երկիր Հայաստանի դեմ: Ռուսաստանի որոշ շրջանակներում այս քայլը որակում են՝ որպես բիզնես, սակայն ո՛չ ԱՄՆ-ը և ո՛չ էլ Ֆրանսիան զենք չեն վաճառում հակամարտող կողմերին: Բերենք թարմ օրինակ. 2014 թ. օգոստոսի 18-ին ադրբեջանական APA գործակալությունը հայտարարություն տարածեց, որ ԱՄՆ-ը հրաժարվել է Ադրբեջանին վաճառել Աֆղանստանից դուրս բերվող ռազմական տեխնիկան: Վաշինգտոնը սա մեկնաբանել է այնպես, որ իրենց մոտ արգելված է զենք վաճառել հակամարտող երկրներին[3]:

Ամփոփելով՝ նշենք, որ ԱՄՆ-ը, ՌԴ-ն և ԵՄ-ն շարունակում են ԼՂ հակամարտությունը օգտագործել Հարավային Կովկասում իրենց կենսական շահերի համար և status quo-ի պահպանումը նրանց ձեռնտու է: Միևնույն ժամանակ հակամարտության չկարգավորված լինելը վտանգավոր է ողջ տարածաշրջանի համար, և դա կշարունակվի, քանի դեռ հակամարտ կողմերը չեն ստորագրել խաղաղության հաստատման մասին պայմանագիրը:

Գրիգոր Բալասանյան

ԱՄՆ-Ը, ԵՄ-Ն ԵՎ ՌԴ-Ն ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Բանալի բառեր՝ Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Եվրամիություն, էթնոքաղաքական հակամարտություն, Հարավային Կովկաս, Լեռնային Ղարաբաղ, Հարավային Օսիա, Աբխազիա

Հոդվածում ուսումնասիրվում են ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՌԴ-ի արտաքին քաղաքականության խնդիրները տարածաշրջանում: Ուսումնասիրությունը պայմանականորեն բաժանված է 2 մասի՝ քաղաքականությունը 1990-2000-ական թթ.: 1990-ական թթ. տարածաշրջանում ակտիվ էր ՌԴ-ն, սակայն 2000-ական թթ. սկզբից ԱՄՆ-ը ևս սկսեց ակտիվանալ: ՌԴ-ի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունների ճանաչումից հետո ուժային կենտրոնների ուշադրությունը սևեռվեց ԼՂ հակամարտության կարգավորման վրա:

[1] "Сопредседатели МГ ОБСЕ выступили с заявлением в связи с 20-летием подписания соглашения о режиме прекращения огня", 12.05.2014, հասանելի է՝ http://www.panorama.am/ru/politics/2014/05/12/co-chair.

[2] "Встреча с Сержем Саргсяном и Ильхамом Алиевым", 10.08.2014, հասանելի է՝ http://www.kremlin.ru/news/46427.

[3] "США отказали Азербайджану в продаже военной техники", 18.08.2014, հասանելի է՝ http://news.am/rus/news/224533.html.

Григор Баласанян

США, ЕС И РФ В ПРОЦЕССЕ УРЕГУЛИРОВАНИЯ КОНФЛИКТОВ НА ЮЖНОМ КАВКАЗЕ

Ключевые слова: Россия, США, этнополитический конфликт, Южный Кавказ, Нагорный Карабах, Южная Осетия, Абхазия

В статье рассматриваются вопросы внешней политики РФ, США и ЕС в регионе. Наше исследование условно разделено на две части – политика в 1990-ых и в 2000-ых годах. Нами замечено, что в регионе в 1990-ых была активна Россия, но с началом 2000-ых США начали активизироваться. После признания Абхазии и Южной Осетии со стороны России основное внимание силовых центров было сосредоточено на урегулировании конфликта в Нагорном Карабахе.

Grigor Balasanyan

THE USA, THE EU AND THE RF IN THE PROCESS OF CONFLICT SETTLEMENT IN THE SOUTHERN CAUCASUS

Keywords: Russia, the USA, ethno-political conflict, Southern Caucasus, Naghorno Karabakh, Southern Ossetia, Abkhazia

The article discusses the issue of the foreign policy of the RF, the USA and the EU in the region. It is divided into 2 parts–the policy of 1990s and of 2000s. In 1990s the RF was active, but by 2000s, the USA accelerated. After the recognition of the independences of the Abkhazia and the Southern Ossetia by the RF, the main interest was the conflict settlement of the NK.